

1590 Թ. ՄԵԼԻՔ-ԱՐՍԼԱՆԼՈՒԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԸ

Բանալի բառեր՝ Երևանի վիլայեթ, Նախիջևան, օսմանյան հարկամատյան, Օսմանյան կայսրություն, օսմանյան հարկեր, ցորենի մշակություն, աքչե, կիլոգրամ, Սեֆյան Իրան, Մելիք-Արսլանլու:

1590 թ. Երևանի վիլայեթի օսմանյան հարկամատյանը¹, որը կազմել է Բարձր Դուռը Սեֆյան Իրանի դեմ պատերազմում (1578-1590 թթ.) տարած հաղթանակի հետևանքով, շարունակում է լինել մեր ուսումնասիրության առանցքում: Խնդրո առարկա նյութի քննությունը վերաբերում է օսմանյան հարկամատյանում կամ աշխարհագիր գրանցամատյանում տեղ գտած Մելիք-Արսլանլուի շրջանին, որն ի թիվս այլ տարածքների՝ Նախիջևան վարչաքաղաքական միավորի մաս է կազմել²: Հարկ է նշել, որ արդեն հրապարակել ենք նույն ժամանակահատվածում Նախիջևանին պատկանող Դարաշամբի օսմանյան հարկացուցակի ուսումնասիրությունը, ինչպես նաև հրատարակման ընթացքի մեջ է նույն վարչաքաղաքական միավորին պատկանող Մավազի Խաթունի օսմանյան հարկացուցակը:

1590 թ. Մելիք-Արսլանլուն ունեցել է նահիեի՝ գյուղախմբի կարգավիճակ, որի մեջ են մտել մի շարք բնակավայրեր³: Մելիք-Արսլանլուի օսմանյան հարկացուցակի տեղեկությունների շնորհիվ, որը շատ կարևոր սկզբնաղբյուր է վերոնշյալ վարչական միավորի ուսումնասիրության համար, համաժամանակյա ձևով կարելի է վերհանել մի քանի խնդիր. պարզել գյուղանունները՝ փորձելով ներկայացնել նրանց տեղագրությունները, անդրադառնալ ժողովրդագրական պատկերին, ինչպես նաև ուսումնասիրել տվյալ շրջանի սոցիալ-տնտեսական վիճակը: Հարկ է նշել, որ դեռևս նման հետազոտություն չի կատարվել: Հոդվածի վերջում ներկայացրել ենք նաև օսմաներեն բնագրի վերծանությունն ու դրա հայերեն թարգմանությունը:

* ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, պատմական գիտությունների թեկնածու, georgmirzabekyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ նոյեմբերի 6, 2022, գրախոսելու օրը՝ դեկտեմբերի 21, 2022:

¹ T. C. Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivi Külliyesi, TT_D, sıra nu: 0633, Tapu Tahrir Defteri (այսուհետև՝ COA).

² COA, էջ 96-97:

³ Նույն տեղում, էջ 135-136:

Երևանի լիլայեթի օսմանյան հարկամատյանից երևում է, որ Մելիք-Արսլանլուի նահիեն շատ բնակավայրեր չի ունեցել և ներառել է ընդամենը 5 գյուղ. դրանք էին՝ Փայիզը, Գերմաշաթաքը, Բզղովը, Քարաքուշը և Լիզբերդը⁴։ Բացի այդ, Մելիք-Արսլանլուն ունեցել է նաև երկու մազրա⁵, որոնք հիշատակված են՝ Զաֆարխանե և Քոհալլար անվանումներով⁶։

Բնակավայրերի տեղադրությունների ուսումնասիրությունից կարելի է փաստել, որ գյուղերը գտնվել են ներկայիս Նախիջևանի տարածքում՝ համանուն քաղաքից հյուսիս՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզին սահմանակից վայրերում։

Փայիզը, որը հանդիպում է Պահեստ, Բայիս, Պայիս, Պայիզ, Փայիզ անվանումներով, պատմական Սյունիք աշխարհի Ճահուկ գավառի մեջ է ընդգրկվել⁷։ Գյուղը ներկայումս մաս կազմելով Նախիջևանի Բաբեկի շրջանին՝ կրում է նույն տեղանունը։ Այն տեղակայված է Նախիջևան քաղաքից հյուսիս՝ Ճահուկ (Ջահրի) գետի աջ լեռնային ափին⁸։ Հիշյալ գյուղի մասին շատ քիչ տեղեկություններ են պահպանվել⁹։

Գերմաշաթաք գյուղը, որը հանդիպում է Գարմաշաթաղ, Գերմաշաթախ, Գյարմաշաթաղ, Թամաշլըք, Թամաշլըղ և համանման անվանումներով, ենթադրաբար նույնացվում է Ստեփանոս Օրբելյանի (XIII դ.) հիշատակած Սյունիքի Ճահուկ գավառի Թամաշաղ հայկական բնակավայրի հետ¹⁰։ Ներկայումս Գերմաշաթաքը ևս Նախիջևանի Բաբեկի շրջանի կազմի մեջ է մտնում՝ գտնվելով Փայիզ գյուղից հյուսիս՝ Ներքին Բուզղով գյուղից 3-4 կմ հարավ-արևելք։ Գյուղի անվանումը չի փոխվել։

Բզղովը, որը հայկական աղբյուրներում հիշատակվում է նաև Բզղոն, Բզղավն, Բզղավն, Բուզզով, Լզղոն, Բզղավն անվանումներով¹¹, գտնվում է Ճահուկ գետի վերին հոսանքում, համապատասխանելով ներկայիս Ներքին Բուզ-

⁴ Նույն տեղում, էջ 135։

⁵ Գյուղատնտեսական աշխատանքի ընդարձակ հողատարածք, որտեղ մարդիկ բնակություն չէին հաստատում։ Ünal M. A., "XVI. Yüzyılda Harput Sancağı (1518-1566)", Ankara, 1989, s. 92.

⁶ COA, էջ 136։

⁷ Ա. Այվազյան, Նախիջևան. բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ, երկրորդ բաժնիովիված և լրամշակված հրատարակություն, Երևան, 2017, էջ 325, 364։

⁸ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Քախյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, ցուցակ 1, Երևան, 2001, էջ 229 (այսուհետև՝ Տեղանունների բառարան)։

⁹ Ա. Այվազյան, Նախիջևան. բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ, Երևան, 1995, էջ 182։

¹⁰ Ա. Այվազյան, Նախիջևան. բնաշխարհիկ պատկերազարդ հանրագիտակ, երկրորդ բաժնիովիված և լրամշակված հրատարակություն, նշվ., աշխ., էջ 342։

¹¹ Տեղանունների բառարան, հ. 1, ցուցակ 1, էջ 680։

ղով գյուղին¹²: Այն Գերմաշաթաքի հյուսիս-արևմուտքում է գտնվում: Ըստ պատմաբան Արգամ Այվազյանի՝ XIX դ. կեսերին բռնագաղթված հայերից հետո գյուղի եկեղեցին, գերեզմանատունը և այլ հուշարձաններ հողին են հավասարեցվել: Գյուղի մերձակայքում կա մ.թ.ա. II-I հազարամյակի կեսերին վերագրվող հնավայր¹³:

Քարաքուշը, որը հանդիպում է Ղարաղուշ, Գարագուշ, Կարակուշ անվանումներով, ներկայում ավերակ բնակավայր է ենթադրում: Պատմաբան Ա. Այվազյանը ավերակի հետքերը տեղորոշում է Ազնաբերդ գյուղից (ներկայում՝ Ջախանքալա) 5-6 կմ հյուսիս¹⁴: Այն Բղզովից փոքր-ինչ հյուսիս-արևմուտք է ընկել¹⁵: Գյուղը XVII դ. սկզբներին ուներ 50 տուն և Աստվածածին եկեղեցի: Նույն դարի երկրորդ կեսին Դոմինիկյան Հայր Նազար միաբանը գրում է, որ գյուղում կար 4 տուն՝ 30 բնակչով, իսկ 1674 թ.՝ 5 տուն: XVII դ. վերջին գյուղն արդեն ավերակ ու ամայի էր¹⁶:

Լիզբերդը՝ հայկական աղբյուրներում հանդիպում է Լիզբիրտ, Լիզբուրդ, Լիզբիրթ ձևերով և ներկայում ավերակ է: Այն գտնվել է Ճահուկ գետի վերին հոսանքում՝ Ազնաբերդի և Քարաքուշի մեջտեղում, Բուզղով և Գերմաշաթաք գյուղերից մի փոքր արևմուտք ընկած հատվածում¹⁷:

1590 թ. Մելիք-Արսլանլուի հարկացուցակում միայն մեկ գյուղ էր բնակեցված՝ Գերմաշաթաքը, որն իր հերթին աչքի չէր ընկնում մեծ բնակչությամբ. ընդամենն ուներ չորս մահմեդական տուն¹⁸: Մյուս բոլոր բնակավայրերում որևէ հարկատու չի հանդիպում: Ըստ խնդրո առարկա նյութի ուսումնասիրության՝ չորս մահմեդական հարկատուներն ունեին բեննաքի¹⁹ կարգավիճակ, ինչը նշանակում է, որ ընտանիքները նույնպես չորսն էին:

Բացի այդ, օսմանյան իշխանությունները Գերմաշաթաք գյուղի դիմաց արձանագրել են հարկաբաժին, որն արտացոլում է մահմեդական ընտանիքներից

¹² Ա. Այվազյան, նշվ., աշխ., 335:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 281:

¹⁵ “Nakhijevan Atlas”, text by Samvel Karapetyan, Yerevan, 2012, էջ 21.

¹⁶ Տեղանունների բառարան, հ. 3, ցուցակ 1, էջ 535:

¹⁷ “Nakhijevan Atlas”, նշվ., աշխ., էջ 21.

¹⁸ COA, էջ 135:

¹⁹ Բեննաֆ (بن‌ناف) խոսքը չիֆթ չունեցող ամուսնացած այն մահմեդական հպատակների մասին է, որոնց մշակույթյան տիրույթը կես չիֆթից պակաս հողատարածք էր: Կարելի է տարբերել՝ էֆինլու և ջաբա (fara) բեննաֆ: Առաջին խմբին պատկանողները տիրապետել են նշյալ չափի հողատարածքի, այնինչ ջաբաները զրկված լինելով որևէ հողակտորից՝ ուրիշների տիրույթներում կամ բանվոր էին աշխատում, կամ էլ՝ այն շահագործում էին հողատիրոջից վարելահողի իրավունք ստանալուց հետո: Taşkın Ü.“Rüşüm-i Orfiye”, İzmir, sayı: XIV, 2013, ss. 59-60:

սահմանված հարկերը: Ուշագրավ է, որ մյուս գյուղերի դիմաց առանձին հարկաբաժին գոյություն չունի, այլ միայն ընդհանուր հարկադրույքներ են արձանագրված, ինչը պայմանավորված էր տեղերում բնակչության բացակայությամբ²⁰: Սակայն անգամ այդ պայմաններում բնակչությունից զուրկ գյուղերի դիմաց ընդհանուր հարկադրույքների նշումը, կարծում ենք, ուներ մի նպատակ. ամենայն հավանականությամբ, դրանով օսմանյան իշխանությունները գնահատել են տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական ներուժը և համապատասխան արձանագրված հարկաչափը կսահմանվեր, եթե այդ գյուղեր բնակիչների վերադարձ կամ փոխադրում իրականանար:

Ըստ օսմանյան հարկացուցակի՝ Գերմաշաթաք գյուղից տուրքեր են սահմանել բեննաքի, դյունումի²¹, ցորենի, գարու, քավերսի(“)²², ոսպի, բամբակի, փեթակի, բանջարանոցի, խոտի, յաթաքի²³, ձմեռակացի, ոչխարների հարկի, դաշտապահության և հողի թափուի²⁴, խարիջի²⁵, բադհավայի²⁶ և հարսնության, ինչպես նաև երկու ջրաղացի դիմաց²⁷:

Օսմանյան իշխանություններն ավանդապես հարկաբաժնում տուրքերն ու դրանց դրույքաչափերն արձանագրել են ինչպես առանձին, այնպես էլ վերջում՝ ի մի բերելով ընդհանուր գումարը: Գերմաշաթաք գյուղը ևս բացառություն չէր²⁸: Հարկերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տվյալ բնակավայ-

²⁰ COA, էջ 135:

²¹ «Դյունումի հարկը»՝ «رسم دنوم»-ը, հողային հարկերից է, որը վճարվում էր ըստ օսմանյան չափման միավորի՝ դյունումից: Մեկ դյունումը լայնությամբ և երկարությամբ 40 ֆայլ է կազմել: Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. Կանուննամեներ), քարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրասոյանի և Մ. Կ. Զուլպյանի, Երևան, 1964, էջ 131 (այսուհետև՝ Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում):

²² Դեռևս չենք պարզել այդ հարկի նշանակությունը:

²³ «Յաթաքի հարկը»՝ «رسم يتاق»-ը գանձվել է այն դեպքում, երբ անասունների հոտը կարող էր արածել մեկ այլ սեփականատիրոջ տարածքում: Այն կգանձվեր, եթե հոտը մնար օտար տարածքում երեք օրից ավելի: Çağatay N., «Osmanlı İmparatorluğunda Readan Alınan Vergi ve Resimler», Ankara Dil ve Tarih Coğrafiya Fakültesi Dergisi, Ankara, cilt 5, sayı 5, 1947, s. 510:

²⁴ Հողային հարկի տեսակներից է, որը ֆեոդալին վճարվում է մեկ անգամ: Turan A.N., «XVI. Yüzyılda Ruha (Urfa) Sancağı», Ankara, 2012, ss. 105-106:

²⁵ «Խարիջիի հարկը»՝ «رسم خارجین»-ը, բնորոշել է հարկացուցակների գրանցման ժամանակ պաշտոնյաների աշխից վրիպած կամ հայտ եկող ավելացումները, որոնք չեն արձանագրվել հարկամատյաններում: Հարկը կիրառվել է ինչպես հողատարածքների, այնպես էլ՝ բնակիչների համատեքստում: Halil İnalçık, «Hicrî 835 tarihli Süret-i defter-i sancak-i Arvanid», Ankara, 1987, s. 25:

²⁶ Ֆեոդալի օգտին գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անվանումն է: Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 129:

²⁷ COA, էջ 135:

²⁸ Նույն տեղում:

րի զարգացման համար առանցքային նշանակություն է ունեցել ցորենի մշակությունը, որի դիմաց գանձվող դրույքաշահին ամենաբարձրն է սահմանվել: Մանրամասնելով խնդրի բովանդակությունը՝ ստացվում է, որ կենտրոնական իշխանությունները 800 քիլե²⁹ ցորենի բերքի դիմաց սահմանել են 6400 աքչե³⁰: Հետևաբար՝ եթե ստացված տվյալները վերածենք կգ-ի, ապա կստացվի, որ Գերմաշաթաք գյուղում արձանագրվել է շուրջ 20,524 կգ բերք: Մշակաբույսերից հիշյալ գյուղում բարձր է եղել գարու և քավերսի (°) տարածվածությունը. դրանց բերքը կազմել է համապատասխանաբար 300 և 350 քիլե՝ հավասար լինելով 3600 և 2100 աքչեի: Այսպես օրինակ՝ ցորենի բերքը հաշվելու տրամաբանությամբ՝ գարու բերքը կազմել է շուրջ 7696 կգ, իսկ քավերսինը (°)՝ 8979 կգ:

Հարկերի վճարումից երևում է, որ գյուղում կարևոր դեր են ունեցել բամբակագործությունն ու անասնապահությունը: 1590 թ. դրույթյամբ արձանագրվել է 15 մանն³¹ բամբակ, որից սահմանավել է 1440 աքչե³², այսինքն՝ 50,4 կգ բամբակ: Ինչ վերաբերում է անասնապահությանը, ապա խոսքը ոչխարաբուծությանը մասին է: Օսմանյան իշխանությունները ոչխարների հարկից գանձել են 1500 աքչե³³: Հատկանշական է, որ 1590 թ. Երևանի վիլայեթի քանոննամեի (օրինամատյան) համաձայն՝ կենտրոնական իշխանությունները յուրաքանչյուր երկրորդ ոչխարի դիմաց՝ ներառյալ գառները, սահմանել են 1-ական աքչե հարկ: Հետևաբար՝ նշյալ ժամանակահատվածում Գերմաշաթաքում կար շուրջ 3000 ոչխար և գառ:

Բացի Գերմաշաթաքից, սոցիալական ակտիվության բաղադրիչ է նկատվում նաև Փայիզում: Այնտեղ արձանագարվել է երեք չիֆթի³⁴ (կամ չիֆթլիքի) մասին տեղեկություն, որոնք պատկանել են երեք տարբեր անհատի: Նրանք ըստ գրություն՝ պարտավոր էին որպես հարկ վճարել բերքի տասանորդը: Սակայն հատ-

²⁹ Կշի չափման միավոր: Օսմանյան կայսրությունում այն հիմնականում հաշվվել է ըստ՝ «Ստամբուլի ֆիլեի»: Յուրաֆանչյուր քիլե հավասար է եղել 25,656 կգ-ի: Ünal M., A., նշվ., աշխ., էջ 101-102, Hinz W., “İslam’da Ölçü Sistemleri”, Çeviren: Sevim A., İstanbul, 1990, ss. 51-52:

³⁰ Օսմանյան դրամական միավոր: Աֆչեն հավասար էր մեկ ֆառոդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը՝ 3,06 գրամի: Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, էջ 128:

³¹ Բամբակի կշիռի միավոր: 1580-ականներին 1 մաննը կազմում էր 3,36 կգ: W. Hinz, նշվ., աշխ., էջ 26:

³² COA, էջ 135:

³³ COA, էջ 135:

³⁴ Զիֆթ՝ «چفت», Պարսկերեն ջոֆթ բառից, որը նշանակում է զույգ: Զիֆթը կամ չիֆթը այն հողակտորն էր, որը հնարավոր էր մշակել մի զույգ եզան միջոցով: Ըստ Երևանի վիլայեթի 16-րդ դարի ֆանուննամեի՝ ամբողջական չիֆթի՝ «چفت» չափը բարձր բերատվությամբ աչի ընկնող տեղի համար հավասար է եղել 80, միջին տեղում՝ 100, իսկ վատ տեղում՝ 130 դյոնումի: Բացի այդ, հանդիպում է նաև կես չիֆթը՝ «نیم چفت», որը ենթադրել է 2 անգամ փոքր հողատարածք: COA, էջ 4:

կանչական է, որ չիֆթերից վերջինի դիմաց, երբ ավարտվում է տասանորդի մասին հիշատակությունը, նշված է՝ «100 քիլեն մեկ»-كیلا صد»գրությունը³⁵, ինչից կարելի է ենթադրել, որ տասանորդը կենտրոնական իշխանություններին տրվելու էր հենց այդ հաճախականությամբ: Դժվար է ասել սակայն, թե այդ գրությունը արդյո՞ք վերաբերում էր բոլոր երեք չիֆթերին, սակայն փաստ է, որ այն նշվել է երրորդ՝ վերջին չիֆթի մասին տեղեկությունից հետո:

1590 թ. Մելիք-Արսլանլուի գյուղերից ամենամեծ հարկադրույքն արձանագրվել է Փայիզի դիմաց, և այն կազմել է 39,000 աքչե: Դրան հաջորդել է Բզդովը 23,000 աքչե գումարով, որից հետո միայն Գերմաշաթաքը՝ 19,000 աքչե տնտեսական ներուժով: Գերմաշաթաքին մի փոքր զիջել է Լիզբերդի տնտեսությունը՝ 14,000 աքչե, իսկ Քարաքուշի դիմաց օսմանցիներն արձանագրել են ընդամենը 5,000 աքչե³⁶:

Այսպիսով 1590 թ. Մելիք-Արսլանլուի օսմանյան հարկացուցակի ուսումնասիրության շնորհիվ պարզել ենք, որ այդ շրջանը Նախիջևան վարչաքաղաքական միավորի մաս է կազմել՝ ունենալով նահիեի՝ գյուղախմբի կարգավիճակ: Այն բաղկացած էր ընդամենը հինգ գյուղից, որից ընդամենը Գերմաշաթաք գյուղն էր բնակեցված՝ ընդամենը ունենալով մահմեդական չորս ընտանիք:

Գյուղերի տեղադրությունների քննությունից կարելի է եզրակացնել, որ նրանք բոլորն էլ գտնվել են ներկայիս Նախիջևանի Խնքնավար Հանրապետության տարածքում՝ Հայաստանի Վայոց ձորի մարզին սահմանակից գոտիներում՝ տեղակայված Ճահուկ գետի վերին հոսանքներում: Գյուղերի տեղադրությունը մեծամասամբ ընդգրկել է Փայիզից Բուզդով ընկած հատվածը:

Ինչ վերաբերում է Մելիք-Արսլանլուի սոցիալ-տնտեսական պատկերին, ապա միակ բնակեցված գյուղում՝ Գերմաշաթաքում, տնտեսության համար առանցքային նշանակություն ունեին մշակաբույսերն ու ոչխարաբաժությունը: Ուշագրավ է, որ ըստ օսմանյան հարկամատյանի քննության՝ կարող ենք փաստել, որ Գերմաշաթաքը սոցիալ-տնտեսական ներուժի տեսանկյունից ամենևին աչքի չէր ընկնում ամենաբարձր հարկադրույքով, և դա այն դեպքում, երբ մյուս գյուղերում բնակչություն արձանագրված չէր:

Ստորև ներկայացնում ենք Մելիք-Արսլանլու գյուղախմբի օսմաներեն բնագրի հայերեն թարգմանությունը՝ հավատարիմ մնալով օսմաներենի հնչյունական համակարգին: Հուսով ենք՝ սույն աշխատանքը կարևոր դեր կխաղա ոչ միայն Նախիջևանի, այլև պատմական Հայաստանի արևելյան հատվածի ուսումնասիրության գործում:

³⁵ COA, էջ 135:

³⁶ Նույն տեղում:

1590 թ. Մելիք-Արսլանլուի օսմանյան հարկացուցակը

Մելիք-Արսլանլուի նահիե

Գյուղ Փայիզ՝ պատկանում է հիշյալին³⁷

Զիֆթլիք՝ գտնվում է Շեյխ Վելիի և Ղարզոլլահի՞ տիրապետության ներքո: Տասանորդ է վճարվում

Զիֆթլիք՝ գտնվում է Ղազի Մոհամմադի տիրապետության տակ: Տասանորդ է վճարվում

Զիֆթլիք՝ գտնվում է Մոլանա Շեյխ Ամիրաղայի տիրապետության տակ: Տասանորդ են վճարում

100 քիլեն մեկ

Հասույթ 39,000

Գյուղ Գերմաշաթաք՝ պատկանում է Մելիք-Արսլանլուին:

1. Մոհամմադ՝ որդի Շեքերի
(բեննաք)

2. Էլիաս՝ որդի Իմամբուլիի
(բեննաք)

3. Ամիրի՝ որդի Փիրբուղաղի
(բեննաք)

4. Հաբեթբուլի՝ որդի Քուլիահմեդի
(բեննաք)

Հասույթ 19,000

Բեննաք՝ 72

Դյունումի հարկ՝ 100

Յորեն՝ 800 քիլե, 6400

Գարի՝ 300 քիլե, 3600

Քավերս(՝) 350 քիլե, 2100

Ոսպ՝ 20 քիլե, 160

Բամբակ՝ 15 ման, 1440

Փեթակի հարկ՝ 150

Բանջարանոցի հարկ՝ 130

Խոտի հարկ՝ 150

Յաթաքի հարկ՝ 300

Ձմեռակացի հարկ՝ 250

Ոչխարների հարկ՝ 1500

Դաշտապահության և հողի թափուի հարկ՝ 1500

Հարիջինի հարկեր՝ 800

Բաղհավայի և հարսնության հարկ՝ 82

Էլիասի 1 ջրաղացը, տարեկան՝ 30

Մոհամմադի 1 ջրաղացը՝ տարեկան՝ 30

Գյուղ Բզդուլ՝ պատկանում է Մելիք-Արսլանլուին: Հասույթ 23,500

Գյուղ Քարաքուշ՝ պատկանում է հիշյալին: Հասույթ 5,000

Գյուղ Լիզբերդ՝ պատկանում է հիշյալին: Հասույթ 14,000

Մազրա Զաֆարխանե

Մազրա Քոհալլար

³⁷ Այսինքն՝ Մելիք-Արսլանլուին:

GEORGI MIRZABEKYAN**THE OTTOMAN TAX REGISTER
OF MELIK-ARSLANLU OF 1590**

Keywords: Yerevan Vilayet, Nakhijevan, the Ottoman tax register, the Ottoman Empire, the Ottoman taxes, wheat cultivation, akce, kilogram, Safavid Iran, Melik-Arslanlu.

According to the Great Defter of the Yerevan Vilayet of the year 1590, the Ottoman authorities incorporated Melik-Arslanlu into the administrative unit of Nakhijevan. The Ottoman tax register of the Melik-Arslanlu region is a very important primary source for studying toponyms, demography and socio-economic issues. In 1590, it consisted of five villages, the location of which correspond to the current northern parts of the Nakhijevan Autonomous Republic, which borders southern Vayots Dzor. According to the Ottoman Tax Register, only one village was inhabited, Germachatagh, where the population consisted of merely 4 families.

The study of the Ottoman Tax Register of Melik-Arslanlu makes it possible to form an idea of the socio-economic condition of the village. According to this primary source, the people were mainly engaged in agriculture and mainly produced wheat.

ГЕОРГИЙ МИРЗАБЕКЯН**ОСМАНСКИЙ НАЛОГОВЫЙ РЕЕСТР
МЕЛИК-АРСЛАНЛУ 1590 Г.**

Ключевые слова: Ереванский вилайет, Нахиджеван, османский налоговый реестр, Османская Империя, османские налоги, выращивание пшеницы, акче, килограмм, Сефевидский Иран, Мелик-Арсланлу.

По данным османского пространного реестра Ереванского Вилайета 1590 г., османские власти включили Мелик-Арсланлу в административную единицу Нахиджевана. Османский налоговый реестр Мелик-Арсланлу – очень важный первоисточник для исследования топонимики, демографических и социально-

политических вопросов. В 1590 г. Мелик-Арсланлу состоял из пять сел, расположение которых соответствуют нынешним северным частям Нахиджеванской Автономной Республики, граничащей с южной частью Вайоц Дзора. Согласно Османскому налоговому реестру, была заселена только одна деревня: население Гермачатага состояло всего из 4 семей.

Благодаря изучению османского налогового реестра Мелик-Арсланлу можно выяснить социально-экономическое положение села. Согласно первоисточнику, люди в основном занимались сельским хозяйством и выращивали пшеницу.